Արձանագրություն N 2

« Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

06.09.2017թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ղուկասյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Մկրտչյան /գնահատող/, Ս. Ղարագյոզյան /գնահատող/
Հ. Վարդերեսյան /բացող/, Ռ. Սարգսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ն. Ղուկասյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի սեպտեմբերի 6-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-17/6» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ն. Ղուկասյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Սանլորետ» ՍՊԸ
2	«Կոտայք Շին» ՍՊԸ
3	«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
4	«Զևավորում» ՓԲԸ
5	«Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ
6	«Էլշին» ՍՊԸ և «Գոռպլաստ» ՍՊԸ
7	«Ռազովալո» ՍՊԸ
8	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
9	«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ
10	«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ
11	«ՌԱԶ ՇԻՆ» ՍՊԸ
12	«ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ
13	«Այպոշին» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ն. Ղուկասյան)

3.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման աշխատանքներ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«Սանլորետ» ՍՊԸ	16 659 000	9995000	1999000	11994000
«Կոտայք Շին» ՍՊԸ		9996000	1999200	11995200
«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ		10450000		10450000
«Ձևավորում» ՓԲԸ		10708333	2141667	12850000
«Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ		11106000	2221200	13327200
«Էլշին» ՍՊԸ և «Գոռպլաստ» ՍՊԸ		11800000		11800000
«Ռազովալո» ՍՊԸ		12000000		12000000
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ		12350000	2470000	14820000
«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ		12500000	2500000	15000000
«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ		13130098		13130098
«ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ		13200000	2640000	15840000
«ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ		13400000	2680000	16080000
«Այպոշին» ՍՊԸ		13882500	2776500	16659000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ն. Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովը որոշեց մերժել հետևյալ մասնակիցների հայտերը.

Մասնակիցների անվանումը	Մերժման հիմնավորումը
«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ	Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն փաստաթղթերի, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնություն և գնային առաջարկ, վրա տեսանելի չէ ստորագրության արտատպումը, համաձայն Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի
«Ռազովալո» ՍՊԸ	Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ստորագրված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն փաստաթղթերի, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնություն և գնային առաջարկ, վրա տեսանելի չէ ստորագրության արտատպումը, համաձայն Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի: Ինչպես նաև տուժանքի մասին համաձայնությունը չի համապատասխանում հրավերով սահմանվածին, տուժանքի մասին համաձայնության մեջ արտատպվել է նաև վճարման պահանջագիրը
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	Մասնակցի կողմից ներկայացված վճարման պահանջագրում լրացվել է ամիս ամսաթիվ, դա լրացվում է Շահառուի կողմից՝ բանկ ուղարկելիս:

4.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա անհամապատասխանության մասին.

- «Սանլորետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված է «Սանլորետ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Գևորգյան», փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված է Էդվարդ

Շահբազյանի կողմից, սակայն ներկայացված հայտում բացակայում է վերջինիս նման լիազորություն վերապահելու փաստը հավաստող փոստաթուղթը:

Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի՝ /այսուհետ՝ Կարգ/ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով «Սանլորետ» ՍՊԸ-ին մինչև 07.09.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը: Մինչև նշված ժամկետի ավարտը անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի՝ հայտը հանձնաժողովի որոշմամբ կգնահատվի անբավարար և կմերժվի:

4.3 Ընթացակարգի մյուս մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերում առկա են բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Ղուկասյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 08.09.2017 թվականին, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ն. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Հ. Վարդերեսյան

---------- Ռ. Սարգսյան

---------- Օ. Մկրտչյան

---------- Ս. Ղարագյոզյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան